ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հոդված 5. Հակամրցակցային համաձայնությունները և դրանց արգելումը

1. Սույն օրենքի իմաստով՝ հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց բանավոր կամ գրավոր այն համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսավարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը, բացառությամբ սույն հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Հակամրցակցային համաձայնությունները կնքվում (կայացվում) են՝

1) միևնույն ապրանքային շուկայում գործող հնարավոր կամ փաստացի մրցակից հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև, եթե համաձայնությունն առնչվում է տվյալ ապրանքային շուկային (հորիզոնական համաձայնություն).

2) միևնույն ապրանքային շուկայում ձեռք բերող և իրացնող, մրցակից չհանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև, եթե համաձայնությունն առնչվում է տվյալ ապրանքային շուկային (ուղղահայաց համաձայնություն).

3) որոշակի փոխկապակցվածություն ունեցող կամ տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտների միջև, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը, ինչպես նաև սույն մասի 1-ին և 2-րդ կետերով չնախատեսված այլ համաձայնություններ (այլ համաձայնություն):

3. Հորիզոնական հակամրցակցային համաձայնությունները կարող են մասնավորապես վերաբերել՝

1) ապրանքային շուկան կամ մատակարարման աղբյուրները բաշխելուն կամ բաժանելուն՝ ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի կամ ապրանքի տեսականու կամ իրացնողների կամ ձեռք բերողների խմբերի կամ տարածքային սկզբունքի կամ այլ եղանակի.

2) այլ տնտեսավարող սուբյեկտների՝ ապրանքային շուկա մուտք գործելուն կամ ապրանքային շուկայից ելքը խոչընդոտելուն (շուկա մուտք գործելը կամ շուկայից ելքը սահմանափակելուն) կամ շուկայից նրանց դուրս մղելուն.

3) ապրանքների գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

4) իրացման կամ ձեռքբերման գների, դրույքաչափերի, զեղչերի, հավելաճի, արտոնությունների կամ առևտրի այլ պայմանների համաձայնեցված ուղղակի կամ անուղղակի սահմանմանը, փոփոխմանը կամ պահպանմանը.

5) արտադրանքի, մատակարարման, տեխնիկական զարգացման կամ արդիականացման, ներմուծման, առևտրի կամ ներդրումների սահմանափակմանը կամ վերահսկմանը.

6) ի վնաս սպառողի շահերի՝ ապրանքների ներկրմանը կամ արտադրության չհիմնավորված կրճատմանը կամ դադարեցմանը կամ ապրանքները պահելու, փչացնելու կամ ոչնչացնելու միջոցով կամ այլ ձևով ապրանքային շուկայում պակասուրդի ստեղծմանը կամ պահպանմանը.

7) պետական գնումների կամ մրցույթների կամ աճուրդների պայմանների կամ արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությանը կամ արդյունքների կեղծմանը (խեղաթյուրմանը) կամ ապրանքի գնի չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

8) որոշակի իրացնողների կամ ձեռք բերողների հետ առևտրային գործունեությունը չկազմակերպելու պայմանավորվածությանը.

9) միևնույն ապրանքի համար խտրական պայմաններ առաջարկելուն կամ կիրառելուն.

10) պայմանագրի կողմին, ներառյալ՝ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորություններ պարտադրելուն, որոնք տնտեսապես կամ տեխնոլոգիապես հիմնավորված և շահավետ չեն նրա համար կամ իրենց բնույթով, կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ.

11) որոշակի իրացնողների կամ ձեռք բերողների հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չմտնելու, կամ պայմանագրային հարաբերությունները դադարեցնելու կամ կասեցնելու պարտադրմանը.

12) հակամրցակցային համաձայնության մասնակցին (մասնակիցներին) պատկանող փոխանցման ցանցերը, այլ բաշխիչ ցանցերը կամ այլ ենթակառուցվածքները ողջամիտ վճարի կամ պայմանի դիմաց այլ տնտեսավարող սուբյեկտներին (սուբյեկտին) օգտագործելու կամ շահագործելու թույլտվություն կամ հասանելիություն չտալուն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտներն օբյեկտիվորեն չեն կարող այլ տնտեսավարող սուբյեկտներից ստանալ այդ փոխանցման ցանցերի, այլ բաշխիչ ցանցերի կամ այլ ենթակառուցվածքների շահագործման կամ օգտագործման թույլտվությունը կամ հասանելիությունը, և առանց դրա հնարավոր չէ գործունեություն իրականացնել ապրանքային շուկայում.

13) այլ պայմանների կամ վարքագծի, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

4. Ուղղահայաց հակամրցակցային համաձայնությունները կարող են մասնավորապես վերաբերել՝

1) ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտի համար տվյալ ապրանքի վերավաճառքի գին սահմանելուն, բացառությամբ ապրանքի վերավաճառքի առավելագույն գնի սահմանման.

2) իրացնող տնտեսավարող սուբյեկտի մրցակից կամ հնարավոր մրցակից համարվող տնտեսավարող սուբյեկտից ապրանք ձեռք բերելուց հրաժարվելուն կամ այդ տնտեսավարող սուբյեկտից ձեռք բերվող ապրանքների քանակի, տեսականու, գնի կամ այլ պայմաններին, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտը գործում է իրացնող տնտեսավարող սուբյեկտի ապրանքային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո.

3) հակամրցակցային համաձայնության մասնակցին (մասնակիցներին) պատկանող փոխանցման ցանցերը, այլ բաշխիչ ցանցերը կամ այլ ենթակառուցվածքները ողջամիտ վճարի կամ պայմանի դիմաց այլ տնտեսավարող սուբյեկտին (սուբյեկտներին) օգտագործելու կամ շահագործելու թույլտվություն չտալուն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտն օբյեկտիվորեն չի կարող այլ տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերել այդ փոխանցման ցանցերի, այլ բաշխիչ ցանցերի կամ այլ ենթակառուցվածքների շահագործման կամ օգտագործման թույլտվությունը, և առանց դրա հնարավոր չէ գործունեություն իրականացնել ապրանքային շուկայում.

4) այլ պայմանների կամ վարքագծի, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի 1-12-րդ կետերով և 4-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված դեպքերում հակամրցակցային համաձայնությունն առկա է անկախ հնարավոր կամ փաստացի հետևանքից:

6. Այլ հակամրցակցային համաձայնությունները կարող են մասնավորապես վերաբերել՝

1) ապրանքների իրացման սահմանափակումներին՝ տարածքային, գնային կամ այլ հատկանիշներից ելնելով.

2) ապրանքների գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը.

3) այլ տնտեսավարող սուբյեկտներից (սուբյեկտներին) ապրանք ձեռք բերելուց (իրացնելուց) հրաժարվելուն.

4) միևնույն ապրանքի համար խտրական պայմաններ առաջարկելուն կամ կիրառելուն.

5) գործարքներում այնպիսի դրույթ սահմանելուն, որը տնտեսապես կամ տեխնոլոգիապես հիմնավորված և շահավետ չէ տնտեսավարող սուբյեկտի համար կամ իր բնույթով կամ իրականացման տեսանկյունից չի առնչվում գործարքի բուն առարկային.

6) որոշակի իրացնողների կամ ձեռք բերողների հետ պայմանագրային հարաբերությունների մեջ չմտնելու, կամ պայմանագրային հարաբերությունները դադարեցնելու կամ կասեցնելու պարտադրմանը.

7) ապրանքային շուկան կամ մատակարարման աղբյուրները բաշխելուն կամ բաժանելուն՝ ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալի կամ ապրանքի տեսականու կամ իրացնողների կամ ձեռք բերողների խմբերի կամ տարածքային սկզբունքի կամ այլ եղանակի.

8) այլ տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն (շուկա մուտք գործելը սահմանափակելուն) կամ շուկայից նրանց դուրս մղելուն.

9) հակամրցակցային համաձայնության մասնակցին (մասնակիցներին) պատկանող փոխանցման ցանցերը, այլ բաշխիչ ցանցերը կամ այլ ենթակառուցվածքները ողջամիտ վճարի կամ պայմանի դիմաց այլ տնտեսավարող սուբյեկտին օգտագործելու կամ շահագործելու թույլտվություն չտալուն, եթե այդ տնտեսավարող սուբյեկտն օբյեկտիվորեն չի կարող այլ

տնտեսավարող սուբյեկտներից ձեռք բերել այդ փոխանցման ցանցերի, այլ բաշխիչ ցանցերի կամ այլ ենթակառուցվածքների շահագործման կամ օգտագործման թույլտվությունը, և առանց դրա հնարավոր չէ գործունեություն իրականացնել ապրանքային շուկայում.

10) մասնագիտական կամ այլ միություններին անդամակցելու կամ դրանց գործունեությանը մասնակցելու պայմանների պարտադրմանը.

11) այլ պայմանների կամ վարքագծի, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը:

7. Հակամրցակցային համաձայնությունը համարվում է ապացուցված, եթե՝

1) առկա է այդ մասին վկայող որևէ փաստական տվյալ (այդ թվում՝ ցանկացած գրավոր փաստաթուղթ կամ գրավոր այլ ապացույց, տեսագրություն կամ ձայնագրություն) կամ օրենքով չարգելված ցանկացած այլ ապացույց.

2) այդ մասին են վկայում տնտեսավարող սուբյեկտների՝ սույն հոդվածի 3-րդ, 4-րդ կամ 6-րդ մասերում նշված գործողությունները կամ վարքագիծը:

8. Հակամրցակցային համաձայնություն կնքելը (կայացնելը) արգելվում է:

9. Հակամրցակցային համաձայնություն չեն համարվում՝

1) տնտեսավարող սուբյեկտների ուղղահայաց կամ այլ համաձայնությունները, եթե այդ համաձայնության մասնակիցներից յուրաքանչյուրի բաժինը համապատասխան ապրանքային շուկայում չի գերազանցում 20 տոկոսը.

2) անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված համաձայնությունները, եթե այդ տնտեսավարող սուբյեկտներից մեկն ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն է սահմանել տնտեսավարող մյուս սուբյեկտի նկատմամբ, ինչպես նաև եթե այդ տնտեսավարող սուբյեկտները մեկ անձի ուղղակի կամ անուղղակի վերահսկողության տակ են, բացառությամբ այնպիսի տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված համաձայնությունների, որոնք իրականացնում են գործունեության այնպիսի տեսակներ, որոնց միաժամանակ իրականացումն անձանց խմբում ընդգրկված մի քանի տնտեսավարող սուբյեկտի կողմից չի թույլատրվում օրենքով.

3) այն ուղղահայաց կամ այլ համաձայնությունները, որոնցով տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ չեն սահմանվում այնպիսի սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ չեն այդ համաձայնությունների նպատակներն իրականացնելու համար և չեն ստեղծում համապատասխան ապրանքային շուկայում մրցակցության կանխման, սահմանափակման և (կամ) արգելման հնարավորություն, և եթե տնտեսավարող սուբյեկտներն ապացուցում են, որ նման համաձայնությունները նպաստում են կամ կարող են նպաստել՝

ա. ապրանքների արտադրության (իրացման) կատարելագործմանը կամ տեխնիկական (տնտեսական) առաջընթացը խթանելուն կամ համաշխարհային ապրանքային շուկայում Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում արտադրված ապրանքների մրցունակության բարձրացմանը.

բ. համապատասխան անձանց կողմից նման գործողությունների իրականացման հետևանքով ձեռք բերվող առավելությունների (օգուտների) համապատասխան մասի ստացմանն սպառողների կողմից:

Հոդված 37. Հանձնաժողովի լիազորությունները

1. Հանձնաժողովը՝

1) իրականացնում է վերահսկողություն տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ.

2) իրականացնում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները կանխող միջոցառումներ, այդ թվում՝

ա. հաստատում է տնտեսական մրցակցությանն առնչվող խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցներ, այլ փաստաթղթեր.

բ. իրազեկում է հանրությանը տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի մասին.

գ. տալիս է պարզաբանումներ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ.

դ. սույն օրենքով նախատեսված դեպքերում տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց գործողության, գործարքի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ ընդունում է եզրակացություն.

ե. տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց տալիս է զգուշացում այն գործողությունների և (կամ) վարքագծի վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը կամ վնասել սպառողների շահերը.

3) հարուցում է տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ և սույն օրենքը խախտելու համար տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց ենթարկում է պատասխանատվության՝ հանձնարարելով իր սահմանած ժամկետում շտկել խախտումը և հետագայում բացառել այն.

4) իրականացնում է վերահսկողություն՝ Հանձնաժողովի որոշման կատարման (պահպանման) նկատմամբ.

5) իրականացնում է ոլորտային ուսումնասիրություն.

6) սույն օրենքին հակասող գործողությունները կամ վարքագիծը դադարեցնելու միջնորդությամբ դիմում է պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերադասին, իսկ վերադաս չունենալու դեպքում՝ պետական մարմին կամ դրա պաշտոնատար անձին.

7) դիմում է դատարան՝ պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությունը խախտող ակտերը, գործողությունները և անգործությունը ոչ իրավաչափ կամ անվավեր ճանաչելու, դադարեցնելու կամ դրանցից ձեռնպահ մնալու պահանջով, եթե այդ վեճը հնարավոր չէ լուծել վարչական կարգով.

8) դիմում է դատարան՝ տնտեսավարող սուբյեկտի լուծարման, հարկադիր վերակազմակերպման, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների միջև՝ սույն

օրենքի խախտմամբ կնքված գործարքներն անվավեր ճանաչելու պահանջներով .

9) օրենքով սահմանված դեպքում դիմում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում աջակցություն ստանալու նպատակով.

10) իրավաբանական անձի նկատմամբ հարուցված և չավարտված վարչական վարույթի, ինչպես նաև Հանձնաժողովի որոշմամբ սահմանված և չկատարված պարտականությունների առկայության դեպքում դիմում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին հանձնաժողովի կողմից տվյալ իրավաբանական անձի լուծարումը կամ ռեդոմիցիլացումը արգելելու նպատակով.

11) ամփոփում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրառման փորձը և առաջարկություններ է մշակում դրա կատարելագործման ուղղությամբ.

12) մասնակցում է տնտեսական մրցակցության բնագավառում պետական քաղաքականությունը կարգավորող իրավական ակտերի մշակմանը.

13) հաստատում է իր աշխատակարգը.

14) սահմանում է տնտեսավարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքի որոշման մեթոդաբանությունը և կարգը.

15) սահմանում է ապրանքային շուկաների որոշման կարգը.

16) սահմանում է անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների ցուցակը և հիմնավորումները Հանձնաժողով ներկայացնելու կարգը, ձևը և ժամկետները.

17) սահմանում է հայտարարագրման ենթակա համակենտրոնացումների մասնակիցների ակտիվների և հասույթների չափերը, համակենտրոնացման հայտարարագրման կարգը և հայտարարագրի ձևը.

18) սահմանում է ստուգում, հսկիչ գնում, դիտանցում, արտաքին դիտում և մշտադիտարկում իրականացնելու ընթացքի տեսաձայնագրման և լուսանկարահանման կարգը.

19) սահմանում է դիտանցումների և հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունների ձևը.

20) սահմանում է ~~դիտանցումների և~~ հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը.

21) սահմանում է պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը.

22) սահմանում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի՝ պատասխանատվության միջոցի կիրառումից ազատման դիմումների ներկայացման և քննարկման կարգը.

23) ~~սահմանում է տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կիրառվող տուգանքի նվազեցման կարգը~~ սահմանում է հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ կիրառվող տուգանքի չափի նվազեցման կարգը.

24) սահմանում է Հանձնաժողովին փաստաթղթերի հանձնման, ըստ տեսակների՝ գործերի դասակարգման, վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները, ինչպես նաև Հանձնաժողովի գործավարության այլ կանոններ.

25) սահմանում է գաղտնագրման ենթակա հաղորդումը ներկայացնելու և այն գաղտնագրելու կարգը.

26) սահմանում է Հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգը.

27) սահմանում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության մշտադիտարկման և դրա արդյունքների ամփոփման կարգը.

28) սահմանում է Հանձնաժողովի կողմից հարուցված վարույթի շրջանակում ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցների շփոթության աստիճանի նմանության որոշման կարգը.

29) սահմանում է չհիմնավորված բարձր գնի և չհիմնավորված ցածր գնի որոշման կարգը.

30) սահմանում է պետական օժանդակության գնահատման կարգը.

31) սահմանում է պետական օժանդակության միասնական գրանցամատյանի ձևը և վարման կարգը.

32) որոշում է կայացնում հաշտության համաձայնություն կնքելու վերաբերյալ.

33) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

2. Հանձնաժողովը սույն հոդվածի 1-ին մասի 13-31-րդ կետերով նախատեսված իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև մյուս լիազորությունների իրականացման ժամանակ նորմատիվ կարգավորում սահմանելիս ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

Հոդված 43. Պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների պարտականությունը Հանձնաժողովին տեղեկատվություն տրամադրելու հարցում

1. Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա պետական մարմինները, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն, բացառությամբ, [վիճակագրական, բանկային, ապահովագրական և բժշկական գաղտնիք պարունակող տեղեկությունների]~~եթե դրանց տրամադրումն արգելված է օրենքով կամ կարող է թույլատրվել միայն դատական ակտի հիման վրա~~:

2. Հանձնաժողովի նախագահի գրության կամ Հանձնաժողովի որոշման կամ օրենսդրությամբ սահմանված պահանջի հիման վրա տնտեսավարող սուբյեկտները պարտավոր են սահմանված ժամկետում ներկայացնել Հանձնաժողովի՝ օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն~~, բացառությամբ եթե դրանց տրամադրումն արգելված է օրենքով~~:

3. Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելիս Հանձնաժողովը տնտեսավարող սուբյեկտին տեղեկացնում է դրանք ներկայացնելու ժամկետների, ինչպես նաև սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն ներկայացնելու իրավական հետևանքների մասին:

4. Տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

5. Եթե որևէ տնտեսավարող սուբյեկտ սահմանված ժամկետում չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկատվություն, ապա Հանձնաժողովի կողմից իր տրամադրության տակ առկա փաստաթղթերի, նյութերի և այլ տեղեկատվության հիման վրա որոշում կայացվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտը չի ազատվում փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունից կամ դրանք սահմանված ժամկետում չներկայացնելու համար սահմանված պատասխանատվությունից:

6. Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

7. Հանձնաժողովը կարող է ստանալ և լիազորություններն իրականացնելիս օգտագործել պետական էլեկտրոնային հարթակներից հատուկ տեխնիկածրագրային ուղիների միջոցով ձեռք բերված տեղեկատվությունը:

Հոդված 58. Տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացության ընդունման հիմքերը

1. Մինչև համապատասխան գործողության կատարումը, գործարքի կնքումը կամ իրավական ակտի (բացառությամբ նորմատիվ իրավական ակտի) ընդունումը ~~սույն օրենքով նախատեսված դեպքերում~~ դրա՝ տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերը վնասելու, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու խնդրանքով Հանձնաժողով դիմելու իրավունք ունեն պետական մարմինները, դրանց պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտները:

2. Մինչև նորմատիվ իրավական ակտի ընդունումը դրա՝ տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման, արգելման և (կամ) սպառողների շահերը վնասելու, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու խնդրանքով

Հանձնաժողով դիմելու իրավունք ունի այն ընդունելու իրավասություն ունեցող պետական մարմինը կամ դրա պաշտոնատար անձը:

3. Նորմատիվ իրավական ակտի նախագծի՝ տնտեսական մրցակցության պաշտպանությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ եզրակացություն Հանձնաժողովը կարող է ընդունել սեփական նախաձեռնությամբ:

Հոդված 60. Տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն ընդունելու կարգը

1. Տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու համար սահմանված պահանջներին համապատասխան դիմում ստանալու դեպքում Հանձնաժողովը սկսում է եզրակացության ընդունման ընթացակարգ: Ներկայացված դիմումը սույն օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում չի քննարկվում, որի մասին Հանձնաժողովի նախագահի գրությամբ դիմում ներկայացրած անձը տեղեկացվում է 3 օրվա ընթացքում:

~~1.~~2. Տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն տրամադրվում է դիմումը ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

~~1. Տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն ստանալու համար սահմանված պահանջներին համապատասխան դիմում ստանալու կամ Հանձնաժողովի կողմից նախաձեռնություն դրսևորվելու դեպքում Հանձնաժողովը կայացնում է որոշում տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացության ընդունման ընթացակարգ սկսելու մասին:~~

~~2. Տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացությունն ընդունվում է այդ մասին ընթացակարգ սկսելու մասին Հանձնաժողովի որոշումը կայացվելու օրվանից մեկամսյա ժամկետում:~~

3. Հանձնաժողովի պատճառաբանված որոշմամբ տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի վերաբերյալ եզրակացություն տալու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև մեկամսյա ժամկետով:

4. Նախքան եզրակացության ընդունումը Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կարող է դիմել դիմումատուին, պետական մարմիններ և այլ սուբյեկտներին՝ եզրակացության ընդունման համար անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու պահանջով, ինչպես նաև ստանալ քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն, ինչպես նաև դիմումատուին կամ այլ անձանց հրավիրել Հանձնաժողովի նիստի կամ քննարկման:

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված տեղեկատվության բացակայության դեպքում Հանձնաժողովը եզրակացությունն ընդունում է այդ տեղեկատվության բացակայությամբ՝ նշելով դրա նշանակությունը և ազդեցությունը քննարկվող հարցի վերաբերյալ:

Հոդված 71. Համակենտրոնացման թույլատրումը պարզեցված կարգով

1. Խառը համակենտրոնացումը և անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը թույլատրվում է պարզեցված ընթացակարգով, եթե առերևույթ բացակայում են համակենտրոնացումը ~~մերժելու~~ արգելելու հիմքերը:

2. Հանձնաժողովը պարզեցված ընթացակարգով համակենտրոնացումը թույլատրելու մասին որոշումը կայացնում է վարույթի հարուցումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, որը պարունակում է տեղեկություններ համակենտրոնացման մասնակիցների, նրանց գործունեության ոլորտների կամ ապրանքային շուկաների և պարզեցված ընթացակարգով համակենտրոնացումը թույլատրելու հիմնավորումների վերաբերյալ:

Հոդված 88. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ արագացված վարույթը

1. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում վարույթով պատասխանողը իրեն վերագրվող իրավախախտման փաստն ընդունելու և իրավախախտման հետևանքները վերացրած լինելու և իրավախախտման փաստն ընդունելու, իսկ սույն օրենքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում միայն իրավախախտման փաստն ընդունելուիրավախախտման հետևանքները վերացրած լինելու դեպքում կարող է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացնել Հանձնաժողով:

2. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն ներկայացվելու դեպքում վարույթով պատասխանողը չի կարող հետագայում հերքել իր կողմից իրավախախտում կատարելու փաստը:

3. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը Հանձնաժողովը բավարարում կամ մերժում է միջնորդությունն ստանալու օրվանից տասն օրվա ընթացքում:

4. Արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդությունը բավարարվում է, եթե այն համապատասխանում է սույն հոդվածի 1-ին մասի պահանջներին: Նշված պահանջները չբավարարելու դեպքում միջնորդությունը մերժվում է:

5. Արագացված վարույթ կիրառելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի՝ ըստ էության քննությանն ուղղված գործողություններ չեն իրականացվում, և գնահատվում են միայն պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

6. Հանձնաժողովը վարույթի արդյունքում որոշումը կայացնում է արագացված վարույթ կիրառելու մասին որոշման ընդունման օրվանից մեկամսյա ժամկետում՝ առանց վարույթի մասնակիցներին լսման նպատակով նիստ հրավիրելու:

7. Արագացված վարույթի կիրառման արդյունքում պատասխանատվության միջոց կիրառելիս պատասխանատվության միջոցը չի կարող գերազանցել տվյալ իրավախախտման համար նախատեսված ամենախիստ պատասխանատվության միջոցի մեկ երկրորդը:

Հոդված 94. Տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումը

1. Պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տնտեսավարող սուբյեկտի կողմից տվյալ խախտման կրկնակիությունը, եթե նախորդ խախտման համար պատասխանատվության միջոց կիրառելու օրվանից չի անցել հինգ տարի, տնտեսավարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսավարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարվելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, տուգանքի չափը նվազեցնելու ~~պատասխանատվությունից ազատելու~~ հիմքերը, տնտեսավարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտը կամ տնտեսավարող ~~և տնտեսավարող~~ սուբյեկտի պատմությունը:

2. Տնտեսավարող սուբյեկտի աշխատողի վարքագիծն աշխատանքային գործունեության ընթացքում դիտարկվում է որպես տնտեսավարող սուբյեկտի վարքագիծ:

3. Հակամրցակցային համաձայնության համար տուգանք նշանակելիս Հանձնաժողովը հաշվի է առնում նաև սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հակամրցակցային համաձայնության տեսակը (հորիզոնական, ուղղահայաց, այլ), ինչպես նաև պատասխանատվությունից ազատելու կամ տուգանքի չափը նվազեցնելու հիմքերը:

4. Պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությունը սահմանվում է Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 96. Հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտին պատասխանատվությունից ազատումը

1. Հանձնաժողովը կարող է որոշում ընդունել հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց չկիրառելու մասին, եթե տնտեսավարող սուբյեկտը, մինչև տվյալ համաձայնության առնչությամբ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի հարուցման մասին որոշման կայացումը կամ ստուգում կատարելու մասին Հանձնաժողովի նախագահի հրամանի ընդունումն իր նախաձեռնությամբ առաջինն է դիմում Հանձնաժողով և կամովին պարտավորվում դադարեցնել այդ հակամրցակցային համաձայնությանն իր մասնակցությունը (բացառությամբ այն դեպքերի, երբ Հանձնաժողովի կարծիքով դա անհրաժեշտ է հակամրցակցային համաձայնության բացահայտման համար) և հետագայում բացառել այն՝ միաժամանակ ներկայացնելով տվյալ հակամրցակցային համաձայնությանը վերաբերող այնպիսի ապացույցներ, որոնք, ըստ Հանձնաժողովի, բավարար հիմք են տվյալ հակամրցակցային

համաձայնության վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու և (կամ) ստուգում կատարելու համար:

2. Տնտեսավարող սուբյեկտը լիովին ազատվում է հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նախատեսված պատասխանատվությունից, եթե Հանձնաժողովին տրամադրում է իր տնօրինության տակ եղած կամ իրեն հայտնի հետևյալ ապացույցները.

1) հակամրցակցային համաձայնությանը մասնակցող (մասնակցած) բոլոր տնտեսավարող սուբյեկտների անվանումները և այլ տեղեկություններ.

2) հակամրցակցային համաձայնության մանրամասն նկարագրությունը, ներառյալ՝ դրա նպատակը, դրսևորման եղանակը, համաձայնության առարկա հանդիսացող ապրանքը, հակամրցակցային համաձայնության կնքման (կայացման) ամսաթիվը, տևողությունը, վայրը, այլ տվյալներ.

3) բոլոր այն անձանց անունները, պաշտոնները, հասցեները, որոնք ներգրավված են կամ ներգրավված են եղել կամ կարող են ներգրավված լինել հակամրցակցային համաձայնության կնքման (կայացման) գործընթացում.

4) հակամրցակցային համաձայնությանն առնչվող՝ դիմողի տրամադրության տակ եղած այլ ապացույցներ:

3. Հանձնաժողով դիմած տնտեսավարող սուբյեկտը չի կարող ազատվել պատասխանատվությունից, եթե նա չի կատարել հետևյալ պայմաններից որևէ մեկը.

1) տնտեսավարող սուբյեկտը դիմում ներկայացնելուց անմիջապես հետո չի դադարեցնում իր մասնակցությունը հակամրցակցային համաձայնությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հանձնաժողովի կարծիքով դա անհրաժեշտ է հակամրցակցային համաձայնության բացահայտման համար.

2) տեղեկատվություն ներկայացնելու պահից սկսած մինչև վարչական վարույթի ավարտը տնտեսավարող սուբյեկտը չի համագործակցում Հանձնաժողովի հետ՝ առանց վերապահումների և շարունակական հիմունքով: Այդ համագործակցությունը ենթադրում է, որ տնտեսավարող սուբյեկտը՝

ա. ենթադրյալ հակամրցակցային համաձայնության վերաբերյալ ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը և ապացույցները, որոնք հայտնվում են իր տնօրինության տակ կամ հայտնի են դառնում իրեն, անհապաղ ներկայացնում է Հանձնաժողով,

բ. սահմանված ժամկետում պատասխանում է Հանձնաժողովի բոլոր հարցումներին, որոնք կարող են նպաստել ենթադրյալ հակամրցակցային համաձայնությանը վերաբերող փաստերի արձանագրմանը,

գ. ապահովում է իր գործող կամ հնարավորության դեպքում նախկին տնօրենների և աշխատողների բացատրություններ ներկայացնելու հնարավորությունը,

դ. չի ոչնչացնում, կեղծում կամ թաքցնում հակամրցակցային համաձայնությանը վերաբերող տեղեկություններն ու ապացույցները և

ե. չի բացահայտում ենթադրյալ հակամրցակցային համաձայնության վերաբերյալ հայտարարության, դիմումի, տեղեկատվության կամ ապացույցների ներկայացման փաստը և բովանդակությունը մինչև Հանձնաժողովի կողմից

ընդունված հակամրցակցային համաձայնության հնարավոր փաստի վերաբերյալ վարչական վարույթ հարուցվելու մասին որոշման ուժի մեջ մտնելը կամ Հանձնաժողովի համաձայնությամբ՝ այլ դեպքերում:

4. Հակամրցակցային համաձայնության միաժամանակ երկու և (կամ) ավելի մասնակից տնտեսավարող սուբյեկտների ներկայացրած դիմումը Հանձնաժողովը թողնում է առանց քննության:

5. Հակամրցակցային համաձայնության մասնակից տնտեսավարող սուբյեկտի՝ պատասխանատվության միջոցի կիրառումից ազատման դիմումների ներկայացման և քննարկման~~քննության~~ կարգը սահմանվում են Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով: